

Նոր ընտրական օրենսգրքով բավականին բարդացել է ոչ միայն քվեարկության գործընթացը, այլև դրանից հետո ձայների հաշվարկն ու մանդատների բաշխումը: Նոր օրենսգրքով նոր հաշվարկային մեխանիզմներ են ամրագրված: Եվ այդ հաշվարկների արդյունքում կարող է տարածքային կամ, ինչպես ընդունված է ասել, ռեյտինգային թեկնածուները շատ ձայն հավաքելով հանդերձ՝ չանցնեն խորհրդարան: Նույն կուսակցությունից մի ընտրատարածքում կարող է մեկը 5 հազար ձայն հավաքել, մանդատ չստանալ, մյուս ընտրատարածքից մեկ ուրիշը 1000 ձայնով դառնալ պատգամավոր: Այս՝ առաջին հայացքից անարդար ու անհավասար մոտեցման տրամաբանությունը փորձեցինք հասկանալ ԿՀՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի հետ: Նախ, մինչև մանդատների բաշխումը, պետք է պարզել, թե որ քաղաքական ուժը որքան ձայն է հավաքել: Կախված հավաքած ձայների քանակից՝ պարզ կդառնա, թե որին որքան մանդատ է հասնում: Նաև կգումարվեն ազգային փոքրամասնությունների մանդատները: Այս փուլում կորոշվի նաև՝ կոալիցիաներ կազմվո՞ւմ են, թե՞ ոչ, եւ եթե չկազմվեն, արդեն ընտրությունների երկրորդ փուլ կհայտարարվի: Եթե քաղաքական ուժերից մեկը հավաքած լինի 50 տոկոս ձայն, բայց ոչ ավել, քան 54 տոկոսը, ապա ստիպված կլինեն ձեռավորել կոալիցիաներ, որպեսզի խորհրդարանում ձեռավորվի մեծամասնություն՝ ձայների առնվազն 54/46 տոկոս հարաբերակցությամբ: Սա է պառլամենտարիզմի սկզբունքը: Իսկ եթե մի քաղաքական ուժ հավաքած լինի ձայների, ենթադրենք, 70 տոկոսը, ապա այս հարցը չի առաջանա: Դրանից հետո կսկսեն օրենքով նախատեսված մեխանիզմով հաշվել, թե խորհրդարան անցած քաղաքական ուժերի թեկնածուներից ովքեր են ստանալու մանդատ: «Այստեղ օրենքն ամրագրել է կանոն՝ մանդատների կեսը բաշխվելու է համամասնական ընտրական ցուցակում, իսկ մյուս կեսը՝ տարածքային ընտրական ցուցակների միջև: Այս պարագայում, եթե մանդատների քանակը կենտ թիվ է, այդ մեկ լրացուցիչ մանդատը հասնում է համամասնական ցուցակին: Դրանից հետո անցնում ենք տարածքների միջև մանդատների բաշխմանը: Այս դեպքում կիրառվում է բանաձեւային մոդել: Այն մոտավորապես հետեւյալն է. նախ հաշվարկվում է, թե որ ընտրատարածքում որքան ձայն է ստացել տվյալ կուսակցությունը, եւ այդ ձայներից համապատասխան իրականացվում է հաշվարկ: Այսինքն՝ որտեղ ամենաշատ ձայները հավաքած կլինի տվյալ կուսակցությունը, այդ տարածքից առավել մեծ թվով թեկնածուներ կստանան մանդատ», -ասաց պարոն Մուկուչյանը: Նրա ներկայացրած բանաձեւի համաձայն՝ ամեն ընտրատարածքում ստացած ձայները նախ բաժանվում են երկուսի, դրանից գոյանում է մեկ մանդատ, հետո՝ երեքի, որից եւս գոյանում է մեկ մանդատ, այդ ձայները զուգահեռաբար համեմատության մեջ են դրվում մյուս ընտրատարածքների ձայների հետ, եւ դրանց նկատմամբ ունեցած առավելություններից էլ կրկին որոշվում է մանդատների քանակն ամեն տարածքում: Նշենք, որ տարածքային ցուցակներում օրենքով ամրագրված է, որ պետք է նվազագույնը հինգ թեկնածու լինի: Այս խրթին ու ոչ պարզ մաթեմատիկական բանաձեւի ընդհանուր տրամաբանությունը հետեւյալն է. պետք է կուսակցությունները հնարավորինս շատ ձայն հավաքեն ամեն ընտրատարածքում, միայն իքս տարածքում տարածքային թեկնածուներից մեկի բերած շատ ձայնը դեռ իր համար մանդատ չի կարող ապահովել: Դրա համար թիմային աշխատանք է պետք: